ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, **ստորև** ներկայացնում է իր կարիքների համար գրականության հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/71** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 29-ին** կնքված N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/71» ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 17-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Ծովինար Հովհաննիսյանի՝ էտյուդներ և վարժություններ քանոնի համար ուսումնական ձեռնարկի հրատարակման աշխատանքների մինչտպագրական **ծախսերն** իրականացնելու համար Կատարողի կողմից առաջարկվել է տրամադրել կանխավճար՝ պայմանագրի գնի 60%-ի չափով:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրով կանխավճարի տրամադրման նախատեսում պայմանագրի գնի 60%-ի չափով:

Փոփոխության նկարագրություն N 2: Պայմանագրի թիվ 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/71» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «17» 10 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Ամրոց գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 29-ին կնքված հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/71» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 4.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1.1 ենթակետով.

«4.1.1 Պայմանագրի գնից՝ 480 000 (չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ»:

1.1.2 Պայմանագրի թիվ 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 3 (երեք) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011031318 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Ամրոց գրուպ» ՍՊԸ, Հասցեն՝ ք. Երևան, Կասյան 3/26, հեռ.՝ 011 27-08-56, ՀՎՀՀ 00041071, հ/հ 247120029266 «Արդշինբանկ» ՓԲԸ, Աբաբկիր մասնաճյուղ
_____ **Ս. Մուրադյան** (ստորագրություն)	_____ **Վ. Խաչատրյան** (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված

«17» 10 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

Հավելված թիվ 2

« 29» մայիս 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/71» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79971100-2	Ծովինար Հովհաննիսյան (կազմող) Էտյուդներ և վարժություններ քանոնի համար (ուսումնական ձեռնարկ)	0	0	0	0	0	0	0	0	0	480000	800000	800000	**800000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011031318
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ամրոց գրուպ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Երևան, Կասյան 3/26,
հեռ.՝ 011 27-08-56,
ՀՎՀՀ 00041031,
հ/հ 247120029266
«Արդշինբանկ» ՓԲԸ, Արաբկիր մասնաճյուղ

Վ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.